

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ
Վարչության «01» սեպտեմբերի 2021թ.
թիվ 299/Լ որոշմամբ
Վարչության նախագահ
Մհեր Անանյան _____



ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**

Ուժի մեջ է՝ 2021թ.-ի սեպտեմբերի «01»-ից

ԲԱԺԻՆ 1. ՆՊԱՏԱԿԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿԸ

1. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման ընթացակարգով սահմանվում են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից հաճախորդներին արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:

ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

2. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման ընթացակարգի պահանջները տարածվում են կապիտալի շուկայում գործառնությունների իրականացման գործառույթների վրա:
3. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման ընթացակարգը չի կարգավորում սահմանափակ շրջանառության իրավունքով արժեթղթերի և ոչ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխվող արժեթղթերի թողարկման կազմակերպման գործընթացը, բացառությամբ՝ ոչ հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխվող արժեթղթերի այն թողարկումների կազմակերպմանը, որոնց պայմաններով նախատեսված է, որ արժեթղթերը պետք է շրջանառվեն կարգավորվող շուկայում (շուկաներում):

ԳԼՈՒԽ 3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

4. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման ընթացակարգը առնչվում է հետևյալ հիմնական փաստաթղթերի հետ.
 - 1) ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք:
 - 2) «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ Օրենք:
 - 3) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենք:
 - 4) ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07:
 - 5) ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց» ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» Կանոնակարգ 4/03:

- 6) ՀՀ ԿԲ Խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04:
- 7) ՀՀ ԿԲ Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 282-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների միջոցների պաշտպանության կանոնները» Կանոնակարգ 4/12:
- 8) ԵՆ Բանկի Խորհրդի 2020 թվականի մայիսի 15-ի թիվ 13/01-01Լ որոշմամբ հաստատված «Հաճախորդներից ստացված բողոքների և դիմում-առաջարկությունների հետ տարվող աշխատանքների կարգ»
- 9) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2021 թվականի հունվարի 14-ի թիվ 02/01Լ-Հ որոշմամբ հաստատված «Իրավական ակտերի նախագծերի պատրաստման և ընդունման կարգ»:
- 10) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2019 թվականի հուլիսի 10-ի թիվ 27/03Լ-Հ որոշմամբ հաստատված «Բանկի տեղեկատվական ակտիվների դասակարգման և նույնականացման կարգ»:
- 11) ԻՍՕ/ԻԷԿ 27001 «Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական Անվտանգության Կառավարման Համակարգեր. Պահանջներ» ստանդարտ:

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

5. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման ընթացակարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

- 1) **Բանկ (Տեղաբաշխող)**՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:
- 2) **Ընթացակարգ**՝ Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման ընթացակարգ:
- 3) **Օրենք**՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք:
- 4) **Կանոնակարգ**՝ «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04:
- 5) **Թողարկող (Հաճախորդ)**՝ այն անձը, որն արժեթուղթ է թողարկում կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում (սույն Ընթացակարգի իմաստով ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ չի համարվում թողարկող):
- 6) **Արժեթղթերի տեղաբաշխում**՝ Թողարկողի կողմից արժեթղթերի առաջին վաճառքը ներդրողին:
- 7) **Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում**՝ Արժեթղթերի տեղաբաշխումը հրապարակային առաջարկի միջոցով:

- 8) **Երաշխավորված տեղաբաշխում**՝ տեղաբաշխումը համարվում է երաշխավորված եղանակով իրականացվող, եթե Բանկը գնում է Թողարկողի արժեթղթերը նախօրոք նշված ժամկետում դրանք վերավաճառելու պայմանով կամ Բանկը ստանձնում է Թողարկողի՝ նախօրոք նշված ժամկետում չտեղաբաշխված արժեթղթերը գնելու պարտավորություն:
- 9) **Չերաշխավորված տեղաբաշխում**՝ տեղաբաշխումը համարվում է չերաշխավորված եղանակով իրականացվող, եթե Բանկը տեղաբաշխման նպատակով առաջարկում է Թողարկողի արժեթղթերը, վաճառում կամ մասնակցում է նման գործ իրականացնելու համաձայնությանը կամ պայմանագրին՝ չստանձնելով Թողարկողի չտեղաբաշխված արժեթղթերը գնելու պարտավորություն:
- 10) **Արժեթղթերի հրապարակային առաջարկ**՝ որակավորված ներդրող չհանդիսացող 100-ից ավելի անձանց կամ անորոշ թվով անձանց ուղղված արժեթղթերի առաջարկը:
- 11) **Համագործակցության պայմանագիր**՝ Բանկի և Թողարկողի միջև գրավոր կնքված պայմանագիր, որի հիման վրա Բանկը կազմակերպում է Թողարկողի Արժեթղթերի տեղաբաշխման ողջ գործընթացը:
- 12) **Ներդրող**՝ անձ, որը նախատեսում է ձեռք բերել արժեթուղթ:
- 13) **Բորսա**՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ:
- 14) **Ազդագիր (Ծրագրային Ազդագիր)**՝ թողարկողի և նրա արժեթղթերի վերաբերյալ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որի հիման վրա իրականացվում է Արժեթղթերի հրապարակային առաջարկը և (կամ) թույլտվությունը կարգավորվող շուկայում առևտրին:
- 15) **«Պրոֆեսիոնալ հաճախորդ»**՝ Հաճախորդ, որն ունի համապատասխան փորձ և գիտելիք ինքնուրույն ներդրումային որոշումներ իրականացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար:
6. Ընթացակարգում օգտագործվող այլ հասկացությունները, սահմանված չլինելու դեպքում, ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերում սահմանված նշանակությունը, իսկ եթե այդպիսինը սահմանված չէ՝ միջազգային գործարար սովորույթների համաձայն, այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

ԳԼՈՒԽ 5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

7. Խմբագրություն 01, փոփոխություններ չկան:

ԳԼՈՒԽ 6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

8. Ընթացակարգն ունի հետևյալ հավելվածները՝

- 1) Հավելված 1՝ Տեղաբաշխման հայտի ձև:
- 2) Հավելված 2՝ Արժեթղթերի տեղաբաշխման պայմանների նախագծի և ընկերության ֆինանսական ցուցանիշների վերլուծության ներկայացման օրինակելի ձև:
- 3) Հավելված 3՝ Համագործակցության պայմանագրի ձև:
- 4) Հավելված 4՝ Չերաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագրի ձև:
- 5) Հավելված 5՝ Հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության ձև:
- 6) Հավելված 6՝ Թողարկման վերջնական պայմաններին ուղեկցող գրության ձև:
- 7) Հավելված 7՝ Երաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագրի ձև:
- 8) Հավելված 8՝ Շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման պայմանագրի ձև:
- 9) Հավելված 9՝ Տեղաբաշխման իրականացման վերաբերյալ հաշվետվության ձև:
- 10) Հավելված 10՝ Տեղեկություններ Պրոֆեսիոնալ և ոչ Պրոֆեսիոնալ հաճախորդին դասակարգելու նպատակով արժեթղթերի տեղաբաշխման ծառայության մասով հաճախորդի գիտելիքի և փորձի մասին:

ԳԼՈՒԽ 7. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԵՂԱԲԱՇԽՈՂԻ ՄԱՍԻՆ

9. Ստորև ներկայացվում է Բանկի վերաբերյալ տեղեկատվությունը, որը ներկայացվելու է որպես տեղեկատվություն Տեղաբաշխողի մասին՝

- 1) Լրիվ անվանումը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերություն. կրճատ անվանումը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ:
- 2) Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, 0002, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85:
- 3) Էլեկտրոնային հասցեն՝ araratbank@araratbank.am, brokerage@araratbank.am, ինտերնետային կայքը՝ www.araratbank.am, հեռախոսահամարը՝ +374 10 59-23-23 (հեռախոսային կենտրոն) +374 10 53-23-01 (Ներդրումային ծառայությունների վարչություն):
- 4) Տեղաբաշխողը տեղաբաշխման ծառայությունների մատուցումը համատեղում է Օրենքով նախատեսված այլ տեսակի ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունների մատուցման և բանկային գործառնությունների հետ՝ Բանկային գործունեության լիցենզիայի հիման

վրա:

- 5) Տեղաբաշխողը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, որը գտնվում է ք. Երևան, 0010, Վազգեն Սարգսյանի 6 հասցեում, հեռ՝ +374 10 592697, կայք՝ www.cba.am էլ. փոստ՝ mcba@cba.am:

ԲԱԺԻՆ II. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10. Ընթացակարգը կարգավորում է Բանկի կողմից իրականացվող արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման գործունեությունը, որն իր մեջ ներառում է Թողարկողներին հետևյալ ծառայությունների մատուցումը.
- 1) արժեթղթերի շուկայի վերլուծություն (արժեթղթերով կատարված գործարքների վերլուծություն, շուկայի կոնյուկտուրայի ուսումնասիրություն և կանխատեսում),
 - 2) արժեթղթերի թողարկման կազմակերպում,
 - 3) պոտենցիալ ներդրողների բացահայտման աշխատանքների իրականացում (անհատական հանդիպումների, road show-ների կազմակերպման միջոցով),
 - 4) արժեթղթերի տեղաբաշխմանն ուղղված մարքեթինգային միջոցառումների իրականացում (գովազդ, բուկլետների պատրաստում և այլն),
 - 5) արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպում,
 - 6) արժեթղթերի կարգավորվող շուկայում թույլտվություն ստանալու (ցուցակման) կազմակերպում,
 - 7) երկրորդային շուկայում արժեթղթերի իրացվելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում,
 - 8) տեղեկատվության բացահայտման կազմակերպում,
 - 9) արժեթղթերից բխող պարտավորությունների կատարման առնչությամբ ծառայությունների մատուցում,
 - 10) արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման հետ կապված այլ ծառայությունների մատուցում:
11. Ընթացակարգով կարգավորվում են թողարկման և տեղաբաշխման ծառայությունների շրջանակներում Բանկի և Թողարկողի միջև հարաբերությունները:

12. Բանկը կարող է իրականացնել Թողարկողի Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխումը, Երաշխավորված կամ Չերաշխավորված՝ ըստ Թողարկողի և Տեղաբաշխողի միջև ձեռքբերված փոխադարձ համաձայնության:
13. Բանկը տեղաբաշխման գործունեությունը կատարում է ղեկավարվելով՝ ՀՀ Օրենքի և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, սույն Ընթացակարգով, Բանկի ներքին այլ իրավական ակտերով:
14. Ընթացակարգի 10-րդ կետում նշված ծառայությունները Բանկը մատուցում է Թողարկողի հետ կնքելով համապատասխան պայմանագիր (պայմանագրեր) և/կամ համաձայնագիր (համաձայնագրեր): Ծառայությունները Հաճախորդին կարող են առաջարկվել միասնական կամ առանձին փաթեթներով՝ համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր և/կամ համաձայնագիր կնքելու միջոցով:
15. Բանկն իրավունք ունի տեղաբաշխման մասնակցության պայմանագրեր կնքել ներդրումային ծառայություններ մատուցող այլ անձանց և ինստիտուցիոնալ Ներդրողների հետ:
16. Բանկը պատասխանատվություն չի կրում ծառայությունների մատուցման հետ կապված հաճախորդի կրած վնասների համար, բացառությամբ Բանկի կողմից ոչ օրինաչափ գործողությունների իրականացման հետևանքով Թողարկողին և Ներդրողներին պատճառված վնասների:
17. Տեղաբաշխման ծառայությունների մատուցման շրջանակներում Հաճախորդին տրամադրվում է տեղեկատվություն հետևյալի.
 - 1) տեղաբաշխողի և նրա կողմից մատուցվող ծառայությունների մասին,
 - 2) տեղաբաշխման կազմակերպման եղանակների, վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա),
 - 3) տեղաբաշխման հետ կապված ծախսերի և միջնորդավճարների մասին:

ԳԼՈՒԽ 2. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

18. Բանկի կողմից մատուցվող արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների փուլերն են՝
 - 1) Հաճախորդի հետ համագործակցության հաստատում,
 - 2) արժեթղթերի թողարկման կազմակերպում,
 - 3) արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպում,
 - 4) արժեթղթերի կարգավորվող շուկայում թույլտվություն ստանալու (ցուցակման) կազմակերպում,

- 5) արժեթղթերի երկրորդային շուկայում իրացվելիության ապահովման կազմակերպում,
- 6) արժեթղթերի սպասարկման և մարմանն ուղղված ծառայություններ:

ԳԼՈՒԽ 3. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

19. Թողարկողի և Տեղաբաշխողի միջև արժեթղթերի թողարկմանը և տեղաբաշխմանն ուղղված ծառայությունների մատուցման համագործակցությունը հաստատվում է բանակցությունների վարման և Թողարկողի կողմից Տեղաբաշխման հայտի (Հավելված 1) ներկայացման կամ Հաճախորդի կողմից հայտարարված մրցույթներին Բանկի մասնակցելու և հաղթող ճանաչվելու միջոցով:
20. Թողարկողը Բանկի կողմից մատուցվող ներդրումային կոնսոլիդացիոն ծառայություններից օգտվելու նպատակով լրացված Տեղաբաշխման հայտը և Տեղաբաշխողի կողմից պահանջվող փաստաթղթերի փաթեթը ներկայացնում է Բանկին:
21. Բանկի Ներդրումային ծառայությունների վարչության կողմից Թողարկողի ներկայացրած փաստաթղթերն ենթարկվում են վերլուծության և գնահատման:
22. Բանկի Ներդրումային ծառայությունների վարչության ղեկավարի կողմից Բանկի Վարչությանն է ներկայացվում Թողարկողի պարտատոմսերի տեղաբաշխման պայմանների նախագիծը և ընկերության ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը (Հավելված 2):
23. Բանկի Վարչությունը Ներդրումային ծառայությունների վարչության կողմից ներկայացվող Թողարկողի պարտատոմսերի տեղաբաշխման պայմանների նախագծի և ընկերության ֆինանսական ցուցանիշների վերլուծության (Հավելված 2) հիման վրա քննարկում և հաստատում է տեղաբաշխման ծառայությունների մատուցման հիմնական պայմանները:
24. Թողարկողին տեղաբաշխման ծառայությունների մատուցման վերաբերյալ Բանկի Վարչության կողմից դրական որոշումն ընդունվելու դեպքում Բանկի Ներդրումային ծառայությունների վարչության կողմից կազմվում են արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման հետ կապված որոշումների նախագծերը, անհրաժեշտ իրավական փաստաթղթերը, ինչպես նաև արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ժամանակացույցը:
25. Բանկի Վարչության դրական որոշման բացակայության պարագայում Թողարկողին Բանկի պաշտոնական էլեկտրոնային հասցեից ներկայացվում է Տեղաբաշխման հայտը մերժելու վերաբերյալ գրավոր պարզաբանում:
26. Թողարկման վերաբերյալ որոշման նախագծի հաստատումից հետո Բանկի և Թողարկողի միջև կնքվում է Համագործակցության պայմանագիր (Հավելված 3) և

- Չերաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագիր (Հավելված 4) կամ Երաշխավորված եղանակով արժեթղթերի տեղաբաշխման մասին համաձայնագիր (Հավելված 7)՝ արժեթղթերի տեղաբաշխման եղանակից կախված:
27. Նախքան Թողարկողի հետ Համագործակցության պայմանագրի կնքումը, Բանկն իրականացնում է Թողարկողի դասակարգում (Հավելված 10)՝ «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07-ի և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:
28. Թողարկողի դասակարգումից, Համագործակցության և Տեղաբաշխման պայմանագրերի կնքումից հետո Բանկի Ներդրումային ծառայությունների վարչության կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է արժեթղթերի թողարկման Ազդագիրը կամ Ծրագրային Ազդագիրը, որը ներկայացվում է Թողարկողին՝ հաստատման:
29. Թողարկողի իրավասու մարմնի կողմից Ազդագրի կամ Ծրագրային Ազդագրի հաստատումից հետո վերջինս ներկայացվում է ՀՀ Կենտրոնական բանկ՝ գրանցման:
30. Ազդագիրը կամ Ծրագրային Ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացվում Օրենքով, ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և ձևով:
31. Ազդագիրը կամ Ծրագրային Ազդագիրը համարվում է գրանցված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից դրա գրանցման հայտը ստանալու Օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետում, եթե ՀՀ Կենտրոնական բանկն այն չի գրանցում մինչ այդ:
32. Եթե Ազդագրում, այդ թվում դրա թարգմանության մեջ, որևէ էական փաստ է բաց թողնվել կամ խեղաթյուրվել, ապա Բանկը նման տեղեկության բաց թողնման կամ խեղաթյուրման հետևանքով Ներդրողի կրած վնասները փոխհատուցելու համապարտ պատասխանատվություն է կրում Թողարկողի հետ միասին:
33. Բանկն ազատվում է Ընթացակարգի 32-րդ կետում նշված պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ բավարար և պատշաճ ուսումնասիրությունից հետո բավարար հիմքեր է ունեցել հավատալու և հավատացել է, որ Ազդագրի կամ Ծրագրային Ազդագրի գրանցման պահին դրանում սխալ տեղեկատվություն կամ խեղաթյուրում (բացթողում) չի եղել, ինչպես նաև այն դեպքում, եթե վնաս կրած Ներդրողն արժեթղթերը ձեռք բերելու պահին տեղյակ էր կամ ակնհայտորեն կարող էր տեղյակ լինել, որ Ազդագիրը կամ Ծրագրային Ազդագիրը պարունակում է սխալ և ապակողմնորոշիչ տեղեկատվություն:
34. Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում Բանկը իր կայքում հրապարակում է Ազդագիրը կամ Ծրագրային Ազդագիրը Օրենքով սահմանված

կարգով և ժամկետում, բացառությամբ այն դեպքերի, երբ Օրենքի համաձայն՝ Ազդագրի կամ Ծրագրային Ազդագրի հրապարակում չի պահանջվում: Հրապարակման ենթակա է Ազդագրի կամ Ծրագրային Ազդագրի միայն վերջնական տարբերակը:

35. Ազդագրի կամ Ծրագրային Ազդագրի հրապարակելուց անմիջապես հետո, Բանկը հրապարակում է Հայտարարություն հրապարակային առաջարկի վերաբերյալ (Հավելված 5)՝ ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և բովանդակությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ Օրենքի համաձայն՝ Ազդագրի կամ Ծրագրային Ազդագրի հրապարակում չի պահանջվում:
36. Ծրագրային ազդագրով Թողարկողը կարող է առաջարկի ծրագրի հիման վրա շարունակական թողարկում իրականացնել (արժեթղթերի համար կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալ), եթե յուրաքանչյուր Արժեթղթի հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակման (արժեթղթերի՝ կարգավորվող շուկայում թույլտվություն ստանալու) պահին բոլոր փոփոխված տեղեկություններն որպես լրացում գրանցվել և հրապարակվել են Կանոնակարգով սահմանված կարգով:
37. Ծրագրային Ազդագրով առաջարկի ծրագրի հիման վրա յուրաքանչյուր թողարկման համար Բանկի Ներդրումային ծառայությունների վարչության կողմից կազմվում են թողարկման վերջնական պայմանները և Թողարկողի իրավասու մարմնի կողմից հաստատվելուց հետո ներկայացվում՝ ՀՀ Կենտրոնական բանկ՝ կից գրությամբ (Հավելված 6):

ԳԼՈՒԽ 4. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

38. Բորսայում տեղաբաշխման դեպքում Բանկի Ներդրումային ծառայությունների վարչության կողմից կազմվում է Օրենքով, ԿԲ նորմատիվ իրավական ակտերով և Բորսայի կանոններով սահմանված կարգով անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը, որը ներկայացվում է Բորսա:
39. Փոխադարձ համաձայնության դեպքում Բանկի և Թողարկողի միջև կնքվում է արժեթղթերի շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման պայմանագիր (Հավելված 8):
40. Բորսայական տեղաբաշխման դեպքում անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի Բորսա ներկայացումից հետո, իսկ արտաբորսայական տեղաբաշխման դեպքում, Ազդագրի հրապարակման հետ միաժամանակ, Բանկի Ներդրումային ծառայությունների վարչության կողմից կազմված տեղաբաշխման մանրամասների վերաբերյալ հայտարարությունը տրամադրվում է Բանկի համապատասխան

- ստորաբաժանմանը՝ Բանկի կայքում և սոցիալական ցանցերում հրապարակելու նպատակով: Հայտարարության տեքստը տրամադրվում է նաև Թողարկողին:
41. Բորսայական տեղաբաշխման դեպքում Բանկը կազմակերպում է Բորսայում Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացը և պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) Բորսա ներկայացումը: Սույն միջոցառման իրականացման ապահովման շրջանակներում Թողարկողը Բանկին լիազորում է Թողարկողի անունից հանդես գալ Բորսայում, մասնավորապես, Արժեթղթերի թողարկման գործընթացի կազմակերպման համար ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր:
42. Արժեթղթերը Բորսայում տեղաբաշխվում են Բորսայի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով» սահմանված կարգով:
43. Արտաբորսայում Արժեթղթերի տեղաբաշխման գործընթացի իրականացման ապահովման շրջանակներում բաժանորդագրության ժամկետի ընթացքում Թողարկողը Բանկին լիազորում է Թողարկողի անունից հանդես գալ արտաբորսայում, մասնավորապես՝ ներդրողներից ընդունել արժեթղթերի բաժանորդագրության հայտերը և փոխանցել Թողարկողին:
44. Արտաբորսայում Արժեթղթերի փոխանցումը ներդրողների արժեթղթերի հաշվին իրականացվում է Թողարկողի կողմից իր Հաշվի օպերատորին տրված արժեթղթերի տեղաբաշխման հանձնարարականի հիման վրա:
45. Թե Բորսայում, թե արտաբորսայում տեղաբաշխման արդյունքում չտեղաբաշխված ծավալն արժեթղթերի տեղաբաշխման Երաշխավորված եղանակի դեպքում ձեռք է բերվում Բանկի կողմից Թողարկողի հետ համաձայնեցված պայմաններով (Հավելված 7):
46. Արժեթղթերի տեղաբաշխումից հետո տեղաբաշխման արդյունքների հիման վրա մշակվում է հայտարարություն տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ և տրամադրվում Բանկի համապատասխան ստորաբաժանմանը՝ Բանկի կայքում և սոցիալական ցանցերում հրապարակելու նպատակով: Հայտարարության տեքստը տրամադրվում է նաև Թողարկողին:
47. Արժեթղթերի հրապարակային տեղաբաշխումը սկսելու պահից Թողարկողը ՀՀ Կենտրոնական բանկ է ներկայացնում հաշվետվություն՝ տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին՝ ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով:
48. Արժեթղթերի տեղաբաշխման ավարտից հետո, Օրենքով և ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետում, ձևով և կարգով Բանկը Թողարկողին ներկայացնում է տեղաբաշխման հանձնարարականի իրականացման վերաբերյալ հաշվետվություն (Հավելված 9):
49. Տեղաբաշխողը պարտավոր է յուրաքանչյուր կատարված հանձնարարականի վերաբերյալ վարել գրանցամատյան:

ԳԼՈՒԽ 5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄԸ

50. Բանկի և Թողարկողի միջև փոխադարձ համաձայնության դեպքում Արժեթղթերի տեղաբաշխման ավարտից հետո՝ Օրենքով, ԿԲ նորմատիվ իրավական ակտերով և Բորսայի կանոններով սահմանված կարգով, Բանկի Ներդրումային ծառայությունների վարչությունը կազմակերպում է Բորսայում Արժեթղթերի առևտրին թույլտվության/ցուցակման գործընթացի իրականացումը՝ ներառյալ, պահանջվող տեղեկությունների (հաշվետվությունների/փաստաթղթերի) կազմումը և Բորսա ներկայացումը:

51. Ընթացակարգի 50-րդ կետում ներկայացված գործունեության իրականացման ապահովման շրջանակներում Թողարկողը Բանկին լիազորում է Թողարկողի անունից հանդես գալ Բորսայում, մասնավորապես, Թողարկողի Արժեթղթերի առևտրին թույլտվության գործընթացի կազմակերպման համար ներկայացնել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթեր /այդ թվում՝ գրություններ, տեղեկանքներ և այլն/, ստորագրել, կատարել անհրաժեշտ վճարումներ:

52. Տեղաբաշխման ավարտից հետո Օրենքով, ԿԲ նորմատիվ իրավական ակտերով և Բորսայի կանոններով սահմանված կարգով և ժամկետում կարգավորվող շուկայում առևտրի թույլտվություն չստանալու դեպքում արժեթղթերի թողարկումը և տեղաբաշխումը համարվում է չեղյալ:

ԳԼՈՒԽ 6. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

53. Բանկը և/կամ Թողարկողը պատասխանատվություն են կրում պայմանագրով կամ համաձայնագրով ստանձնած իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար և պարտավոր են այդ պարտականությունները խախտելու դեպքում հատուցել մյուս կողմին պատճառված վնասը:

ԳԼՈՒԽ 7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

54. Ընթացակարգով սահմանված գործընթացներում ներգրավված Բանկի աշխատակիցները անհատական պատասխանատվություն են կրում Բանկի ներքին իրավական ակտերով, նրանց հետ կնքված աշխատանքային և նյութական պատասխանատվության պայմանագրերով՝ Ընթացակարգով նրանցից յուրաքանչյուրի համար սահմանված աշխատանքային պարտականությունները ճշգրիտ և պատշաճ չիրականացնելու համար:

ԳԼՈՒԽ 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

55. Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծառայությունների մատուցման հետ կապված՝ Հաճախորդներից բողոքներ և դիմում-առաջարկություններ Բանկին կամ Թողարկողին կարող են փոխանցվել գրավոր, բանավոր, պատվիրված նամակով, էլեկտրոնային փոստով, առձեռն կամ տեղեկատու հեռախոսով: Փոխանցված բողոքների և դիմում-առաջարկությունների հետ աշխատանքները, դրանց նկատմամբ հսկողությունը և պատասխանատվությունը, Բանկի Վարչությանը և Խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ձևերը և ժամկետները սահմանված են Բանկի Խորհրդի 2020 թվականի մայիսի 15-ի թիվ 13/01-01Լ որոշմամբ հաստատված «Հաճախորդներից ստացված բողոքների և դիմում-առաջարկությունների հետ տարվող աշխատանքների կարգ»-ով:

56. Ընթացակարգով սահմանված դրույթների կատարման հսկողությունն իրականացնում է Ներդրումային ծառայությունների վարչության ղեկավարը, իսկ վերահսկողությունը՝ Ներքին աուդիտի վարչությունը: